ISBN 978-9939-1-1794-2

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒՄԸ ԾԻՐԱԿՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՀ ԳԱԱ ԾԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒՄԸ ԾԻՐԱԿՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒՄԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Գյումրի
Էլդորադո
2024

ՀՏԴ 373.2.016:398(07)
ԳՄԴ 82գ գ7
Մ 260

Ձեռնարկը տպագրվում է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ֆինանսավորմամբ՝
22 YR-6B030 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում

Խմբագիր՝ Հասմիկ Հարությունյան
Արվ. թեկնածու, դոցենտ

Կազմողներ՝ Մատիկյան Հասմիկ, Մելիքսեթյան Արեգնազ, Նիկողոսյան Շուշան,
Թումասյան Գոհար

Մ 260 Մանկական բանահյուսության արդի կենցաղավարումը Շիրակում / Կազմ.՝ Հ. Մատիկյան և ուրիշ.- Գյումրի։ Էլդորադո, 2024.- 120 էջ։

Մեթոդական ձեռնարկը նվիրված է մանկական բանահյուսության արդի կենցաղավարմանը Շիրակի մանկապարտեզային միջավայրում։

Գրառված բանահյուսական նյութը ընդհանուր ուրվագծում է մանուկներին հասցեագրված բանավոր ժառանգությունը՝ ժանրային տարբերակներով։

Ձեռնարկը նախատեսված է մանկապարտեզների և մանկանց զարգացման կենտրոնների համար։

Ընդհանուր առմամբ, աշխատանքը կարող է հետաքրքրել նաև բանագետներին, ազգագրագետներին, հոգեբաններին. մշակութաբաններին։

ՀՏԴ 373.2.016:398(07)
ԳՄԴ 82գ գ7

ISBN 978-9939-978-04-8
© Մատիկյան Հ., 2024.

Երկու խոսք

Ուսումնասիրելով մանկապարտեզներում դասավանդվող բանահյուսական ժանրերն ու տեսակները, կիրառման ոլորտը, դասավանդման մեթոդները, ժողովրդական տոներն ու տոնական մշակույթը, ավանդական խաղերն ու ծեսերը՝ կարող ենք ասել, որ նշվածներից յուրաքանչյուրը նպաստում է մանկապարտեզ հաճախող երեխայի գեղագիտական ընդհանուր դաստիարակությանը, պատկերավոր մտածողությանը, աշխարհայացքի ու հոգեկերտվածքի ճիշտ ձևավորմանը, խթանում է նրանց երևակայությունը, նպաստում է խոսքի ու հաղորդակցման մշակույթի զարգացմանը: Երեխաները խաղի, հեքիաթի, հանելուկի, ազգային ծեսի միջոցով ուղղակիորեն հաղորդակից են դառնում մեր մեծերի ավանդած ազգային արժեքներին, երբեմն իրենց խոսքում կիրառելով բարբառը՝ ստեղծում են անմիջական մթնոլորտ:

Բանահյուսական տեքստը, լինելով ժողովրդի հավաքական մտածողության խտացում, ձևավորում ու ընդլայնում է երեխայի մտահորիզոնը. մեր նախնիների իմաստնությունը, սերնդեսերունդ փոխանցվելով, նոր լիցքեր ու ուժականություն է հաղորդում մատաղ սերնդին:

Բանահյուսական նյութը մանկապարտեզներում ու նախակրթարաններում շահեկանորեն մատուցվում է արվեստի տարբեր ձևերի համադրությամբ:

Լավագույն վկայություն է մանկապարտեզներում ներկայացվող գրական հիմքով բեմականացումները կամ բանահյուսական որևէ ժանրի բեմականացումը սաների միջոցով (հանելուկ, առակ, հեքիաթ): Երեխաները անմիջականորեն դառնում են բանահյուսական նյութի կրող և կիրառող: Այսօրինակ բեմականացումները շատ վառ տպավորություն են գտնում նրանց երևակայության մեջ, նախնական պատկերացումներում:

Այս մեթոդական ձեռնարկով փորձել ենք ստեղծել բանահյուսական մոդուլ՝ մանկապարտեզի սաներին ծանոթացնելով հայ բանահյուսության լավագույն նմուշներին:

Առաջին գլխում ներկայացնում ենք բանահյուսական այն ժանրերը, որ ուսումնական նյութ են դարձել Շիրակի մանկապարտեզներում թե՛ առօրյա պարապմունքների և թե՛ միջոցառումների ժամանակ:

Երկրորդ գլխում որոշակիորեն ի մի ենք բերել բանահյուսական այն նյութերը, որ առնչվում են Շիրակի տարածաշրջանի բանավոր մշակույթին: Այս մասում տեղ են գտել անվանի բանագետ Ս. Հարությունյանի գրառած հանելուկները, որոնք առնչվում են Շիրակ աշխարհին, նաև՝ ցայսօր էլ շրջանառվող բանահյուսական այն միավորները, որոնք տպագրվել են ուսումնամեթոդական տարբեր ձեռնարկներում:

Լիահույս ենք, որ մեր գրառած բանահյուսական նմուշները ևս կարող են օգտակար լինել տարբեր միջավայրերի (գրական, գեղարվեստական և այլն) համար:

Հասմիկ Համլետի Մատիկյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ